Հաստատված է

«Հայկական բիզնես կոալիցիայի»
ժողովի որոշմամբ
12.02.2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ»

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ ARMENIAN BUSINESS COALITION

ԵՐԵՎԱՆ-2019

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայկական բիզնես կոալիցիան» (հետայսու՝ Կոալիցիա կամ ՀԲԿ) ձևավորվել և գործում է բիզնես ոլորտի զարգացման արժեքների ընդհանրության, կամավորության, հավասարության, ինքնուրույնության, փոխհամաձայնության, բարեխղճության և կառավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

1.2. Կոալիցիան բիզնես անդամություն ունեցող և/կամ բիզնեսին աջակցություն տրամադրող կազմակերպությունների ոչ ֆորմալ կազմավորում է և գործում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ինչպես նաև 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ՀԲԿ անդամ կազմակերպությունների հիմնադիր ժողովի ժամանակ ընդունված Հուշագրին և սույն Կանոնակարգին համապատասխան:

1.3. Կոալիցիայի անվանումն է.

- հայերեն՝ «Հայկական բիզնես կոալիցիա»:
- անգլերեն՝ “Armenian Business Coalition”:

1.4 Կոալիցիան ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է մուգ դարչնագույն եռաշերտ վեցանկյուն, որը խորհրդանշում է համագործակցությունը և հավասարությունը: Խորհրդանիշի պատկերը կցվում է սույն կանոնակարգին:

1.5. Կոալիցիան կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան, միջազգային և տեղական կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.6. Կոալիցիան կարող է իր նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական մարմիններին:

1.7. Կոալիցիան կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների ցանցերի, կնքել հուշագրեր և համաձայնագրեր օտարերկրյա, միջազգային, տեղական կազմակերպությունների և պետական մարմինների հետ:

1.8. Կոալիցիայի քարտուղարության գտնվելու վայրը՝ Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ, ք. Երևան, Չարենցի 1, 208 սենյակ:

2. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կոալիցիայի նպատակներն են.

- նպաստել բիզնես միջավայրի բարելավմանը, քաղաքականությունների արդյունավետ մշակմանը և իրականացմանը,

- նպաստել բիզնես ոլորտի ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծմանը և ամրապնդմանը,
- բարձրացնել բիզնես շահերի պաշտպանությամբ զբաղված կազմակերպությունների կողմից ՀՀ Կառավարության բիզնես ոլորտի բարեփոխումների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

2.2. Կոալիցիայի խնդիրներն են.

- Մշակել և իրականացնել բիզնես ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ բիզնեսի իրազեկվածության բարձրացման, տեղական և միջազգային շուկաներում մրցունակության բարձրացման, որակի վերահսկողության և այլ առընչակից ոլորտներում՝ օգտագործելով նաև ժամանակից տեղեկատվական տեխնոլոգիաները:
- Զարգացնել Կոալիցիայի անդամ կազմակերպությունների միջև համագործակցությունը:
- Համագործակցել Հայաստանում գործարար ոլորտի զարգացմամբ շահագրգիռ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:
- Կազմակերպել համաժողովներ, աշխատաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, իրականացնել բիզնես ոլորտի զարգացմանն ուղղված այլ աշխատանքներ:

3. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԱԼԻՑԻԱՅԻՆ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

3.1 Կոալիցիային կարող են անդամակցել բիզնես անդամություն ունեցող և/կամ բիզնեսին աջակցող այն կազմակերպությունները, որոնք նպատակ ունեն նպաստելու Հայաստանում գործարար ոլորտի զարգացմանը, տնտեսական բարեփոխումների իրականացմանը, ընդունում են Կոալիցիայի սույն Կանոնակարգում արտահայտված նպատակները, խնդիրները և գործունեության սկզբունքները, ինչը հաստատում են միանալով Կոալիցիայի Հուշագրին: Պետական կամ պետական մասնակցությամբ կազմակերպությունները կարող են անդամակցել կոալիցիային՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

3.2 Գրավոր դիմումի համաձայն Կոալիցիայի անդամի ընդունելության մասին որոշումը կայացվում է Կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից՝ կառավարման խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորմամբ:

3.3. Կոալիցիան վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Կոալիցիայի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից:

3.4. Կոալիցիայի անդամության դադարեցումը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Կոալիցիայի կառավարման խորհրդի՝ տվյալ անդամին Կոալիցիայի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգի 4.2 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կոալիցիայի անդամն իրավունք ունի.

- իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել Կոալիցիայի կառավարմանը,
- Կոալիցիայի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
- ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,
- նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված Կոալիցիայի զարգացմանը,
- իրազեկ լինել Կոալիցիայի գործունեությանը,
- օգտվել Կոալիցիայի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,
- անարգել դուրս գալ Կոալիցիայի անդամությունից:

4.2 Կոալիցիայի անդամը պարտավոր է՝

- տարածել և ջատագովել Կոալիցիայի արժեքները,
- մասնակցել և աջակցել Կոալիցիայի գործունեությանը,
- նպաստել Կոալիցիայի զարգացմանը,
- առանց Կոալիցիայի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ Կոալիցիայի անունից,
- գործել սույն Կանոնակարգին համապատասխան,
- կատարել Կոալիցիայի Կանոնակարգի պահանջները, իրագործել Կոալիցիայի ղեկավար մարմինների որոշումները:

4.3 Կոալիցիայի անդամը պատասխանատվություն չի կրում Կոալիցիայի կամ դրա անդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես նաև Կոալիցիան պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

5. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Կոալիցիայի կառավարման մարմիններն են՝ Կոալիցիայի անդամների ժողովը, կառավարման խորհուրդը և քարտուղարությունը:

5.2. Կոալիցիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Կոալիցիայի ժողովի կողմից:

5.3. Կոալիցիայի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ժողովն է (հետայսու՝ Ժողով), որի իրավասությանն է պատկանում Կոալիցիայի կառավարման և գործունեության առավել էական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման իրավունքը:

5.4. Ժողովը կարող է գումարվել ներկայացուցչական պատվիրակների միջոցով՝ կառավարման խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Կառավարման խորհուրդը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին ժողովի անցկացումից ոչ ուշ քան 5 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է Կոալիցիայի անդամներին:

5.5. ժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

5.6. Կոալիցիայի արտահերթ ժողով գումարվում է Կոալիցիայի քարտուղարության, Կոալիցիայի կառավարման խորհրդի, Կոալիցիայի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում: Արտահերթ ժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով: Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե մասնակցում են Կոալիցիայի բոլոր անդամների կամ Ժողովի բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև կապի միջոցներով:

5.7. Կոալիցիայի Ժողովը.

- հաստատում է Կոալիցիայի Կանոնակարգը, դրանում կատարում է փոփոխություններ և/կամ հաստատում է նոր Կանոնակարգ,
- որոշում է Կոալիցիայի կառավարման խորհրդի թվաքանակն ու քվոտաները, երեք տարի ժամկետով ընտրում է Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամներին, փոփոխում է կառավարման խորհրդի կազմը,
- վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի անդամների լիազորությունները,
- քննարկում և հաստատում է Կոալիցիայի կառավարման խորհրդի և քարտուղարության հաշվետվությունները:

5.8. Կոալիցիայի կառավարման խորհուրդը՝

- համարվում է Կոալիցիայի ղեկավար մարմինը՝ Կոալիցիայի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
- քննարկում և որոշումներ է կայացնում Կոալիցիայի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կոալիցիայի ժողովի իրավասությունների մեջ,
- նախապատրաստում է Կոալիցիայի ժողովները, սահմանում է Կոալիցիայի ժողովի պատվիրակների քվոտան՝ ըստ Կոալիցիայի անդամների թվի,
- Կոալիցիայի ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ կազմակերպում է Կոալիցիայի ժողովի պատվիրակների ընտրությունը,
- որոշում է կայացնում Կոալիցիային անդամակցության, անդամության դադարեցման և անդամությունից հեռացնելու վերաբերյալ,
- որոշումներ է կայացնում Կոալիցիայի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, կոմիտեներ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր և/կամ այլ կառույցներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնակարգին, նշանակում և ազատում է դրանց համակարգողներին և պատասխանատուներին, վերջիններիս տալիս է լիազորագրեր,
- քննարկում և հաստատում է Կոալիցիայի ռազմավարական, կայունության և ֆինանսական պլանները, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը և այլ փաստաթղթեր,
- ընտրում է Կոալիցիայի հանձնաժողովների, աշխատանքային և տարածքային հանձնախմբերի, փորձագիտական կոմիտեի և/կամ այլ կառույցների անդամներին,
- որոշում է կայացնում պետական և անկախ կառույցներին կից հասարակական խորհուրդներին, հանձնաժողովներին և այլ մարմիններին, ինչպես նաև միջազգային կառույցներին Կոալիցիայի անդամակցելու վերաբերյալ,
- ընտրում է կառավարման խորհրդի նախագահին և վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,
- Կոալիցիայի անունից հաստատում և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:

5.9. Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր

թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.10. Կոալիցիայի քարտուղարությունն ընտրվում է մեկ տարի ժամկետով՝ առավելագույնը՝ երկու տարի անընդմեջ ընտրվելու հնարավորությամբ: Կոալիցիայի քարտուղարության գործառույթներն իրականացնող կազմակերպության ղեկավարն ի պաշտոնե հանդիսանում է Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ: Կոալիցիայի կառավարման խորհուրդն իր հերթական նիստերը հրավիրում է առնվազն երկու ամիսը մեկ անգամ՝ Կոալիցիայի քարտուղարության միջոցով: Կոալիցիայի կառավարման խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով, կառավարման խորհրդի նախագահի կամ Կոալիցիայի քարտուղարության կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել կառավարման խորհրդի ընդլայնված նիստեր՝ Կոալիցիայի հանձնաժողովների, փորձագիտական կոմիտեների, տարածքային հանձնախմբերի համակարգողների և պատասխանատուների, ինչպես նաև Կոալիցիայի այլ անդամների մասնակցությամբ:

5.11. Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահի իրավասությունները և ընտրության ռոտացիոն կարգը.

5.11.1. Կառավարման Խորհրդի նախագահն ընտրվում է 12 ամիս ժամկետով:

5.11.2. Կառավարման Խորհրդի նույն անդամը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրվել որպես կառավարման խորհրդի նախագահ:

5.11.3. Կառավարման խորհրդի նիստերը նախագահում են կառավարման խորհրդի անդամները՝ մինչև ռոտացիոն սկզբունքով կառավարման խորհրդի նախագահի ընտրությունը:

5.11.4. Կառավարման խորհրդի նախագահը նախագահում է կառավարման խորհրդի նիստերը:

5.11.5. Կառավարման խորհրդի նախագահը կառավարման խորհրդի նիստի ընթացքում պարտավոր է քվեարկության դնել Կոալիցիայի գործունեության վերաբերյալ կառավարման խորհրդի անդամների կողմից կատարված յուրաքանչյուր առաջարկ:

5.11.6. Կառավարման խորհրդի նիստերը արձանագրում է Կոալիցիայի քարտուղարությունը:

5.11.7. Կառավարման խորհրդի նիստերի բոլոր արձանագրությունները Կոալիցիայի քարտուղարությունը չորս աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է կառավարման խորհրդի անդամներին, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե անդամների կողմից առարկություններ կամ լրացումներ չեն լինում, ստորագրվում է կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարության համակարգողի կողմից:

5.11.8. Կառավարման Խորհրդի նախագահն իրականացնում է նաև Կոալիցիայի Կանոնակարգով կառավարման խորհրդի նախագահի համար նախատեսված այլ լիազորություններ:

5.11.9. Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են հետևյալ դեպքերում՝

- կառավարման խորհրդի նիստին չմասնակցելու դեպքում՝ առանց հարգելի պատճառի,
- կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքում,
- կառավարման խորհրդի որոշմամբ:

5.11.10. Կառավարման խորհրդի նիստին կառավարման խորհրդի նախագահի չմասնակցելու և կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքերում, մինչև կառավարման խորհրդի նոր նախագահի ընտրվելը, կառավարման խորհրդի նիստը նախագահում և նիստի արձանագրությունը ստորագրում է Կոալիցիայի քարտուղարության համակարգողը:

5.12. Կոալիցիայի փորձագիտական կոմիտեն.

- կարող է բաղկացած լինել բիզնես ոլորտի տեղական և միջազգային փորձագետներից, որոնք ընտրվում են Կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից,
- տրամադրում է փորձագիտական աջակցություն՝ Կոալիցիայի զարգացման ու հզորացման և Կոալիցիայի գործունեության արդյունավետ իրականացման նպատակով,
- ուժեղացնում է Կոալիցիայի միջազգային կապերը,
- նպաստում է Կոալիցիայի ֆինանսական կայունության ապահովմանը,
- Կոալիցիայի կառավարման խորհրդի տրամադրած լիազորությունների տրամադրման դեպքում Կոալիցիան ներկայացնում է ոլորտին առնչվող կարևորագույն հարթակներում:

5.13. Կոալիցիայի քարտուղարությունը.

- հանդիսանում է Կոալիցիայի գործադիր մարմինը,
- ապահովում է Կոալիցիայի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը,
- արձանագրում է կառավարման խորհրդի նիստերը,

- տնօրինում է Կոալիցիայի արխիվը,
- համակարգում է Կոալիցիայի կազմակերպչական աշխատանքները, Կոալիցիան ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, Կոալիցիայի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է Կոալիցիայի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը,
- համակարգում է Կոալիցիայի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները,
- վարում է Կոալիցիայի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) Կոալիցիան կարող է դադարեցնել իր գործունեությունը Ժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է Ժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:
2) Կոալիցիայի գործունեության դադարեցումը անդամ կազմակերպությունների համար պարտավորություններ չի առաջացնում:

––––––